

տեսակներէն շատ կը գտնուին հողերու մէջ :

Վիտեղու արժանի բան մըն է որ այն քարաժայռը , որուն մէջէն գտնուեր է այս կենդանին , երկրաբաններուն քննութեանցը նայելով՝ միլիոն մը տարիէ աւելի հնութիւն պիտի ունենայ . և կենդանւոյն բնական ծակն ալ ճիշդ կենդանւոյն ձեւ ունի . որով յայտնի կ'իմացուի որ կենդանին հողին մէջ

կեցած ատեն չորս կողմը կամաց կամաց քարանալով՝ ինքը մէջը փակուած մնացեր է այնչափ տարիներէ 'ի վեր : Եւ այց թէ ինչպէս այսչափ ատեն ողջ կրցեր է մնալ մեծ և ծանր խնդրոյ նիւթ է և պիտի ըլլայ :

Կ'ըսուի որ ասկէջ քանի մը տարի առաջ ալ հանքային ածուխի մէջէն սովորականէ դուրս մեծութեամբ ողջ գորտ մը գտնուեր է :

Մ Ա Ն Ր Գ Ի Տ Ե Լ Ի Ք

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

Երկրիս ջրջապատը 9,000 փարսախ է . իրեն մալերիւն ընդ 25,694,240 քառակուսի փարսախ , և ջուրը անոր 2/3ը կը բռնէ . որով ցամաք երկիրը կը մնայ 8,564,746 քառակուսի փարսախ :

Երկրիս չորս կողմը մթնոլորտ պատած է 20 փարսախ բարձրութեամբ . և մեր շնչած կազը կարգ կարգ քանի որ բարձրանայ , այնչափ աւելի կ'առնարանայ : Ծովուն երեսին վրայ (որ երկրիս ճիշդ մակերեսը կը համարուի) օդուն ըրած ճնշումը անգրիկին 76 հարկերորդամեգր բարձրութեանը կը հաւասարի , ու թող չտար որ շատ շուտով շոգի գառնան ջրերը :

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ

Օգուն կարգերը ամենեկին գոյն չունին , երբոր շատ խառնութիւն չունենան . բայց երբոր արեւուն ճառագայթները մէկէն ամեն կարգերէն կ'անցնին ու կը բեկեկեն , անոր մէկ երկնագոյն անուշ կապոյտ գոյն մը կու տան : Իսկ երբոր արեւը հորիզոնին մօտիկ եղած ատեն կը կարմրի օդը , պատճառը օգուն մէջի եղած գոլորշիներն են : — Թէ որ մթնոլորտ չըլլար , ոչ արշալոյս կ'ըլլար , և ոչ վերջալոյս . արեւը մէկէն 'ի մէկ կ'երևար , և մէկէն 'ի մէկ կը ծածկուէր :

ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ

Մարդիկ հին ատեն տեսնելով բեւեռին կողմին աստղերուն խումբը , որ բեւեռային աստղին մէջ մը վրան , մէջ մը տակը կ'անցնէին , և նոյն ջրջանը միշտ կ'ընէին , Անիւ կամ Սայլ անուանեցին զանիկայ : Իսկ Փիւնիկեցի նաւավարները Ազատութիւն , Փրկութիւն նաւուց կոչեցին զանիկայ , և աւելի

սովորական՝ Խօսուն աստղ : Բայց որովհետեւ Փիւնիկեցոց լեզուով այդ համաստեղութեան անունը նաեւ Աշլ կը նշանակէր , Յոյները այդ նշանակութեամբ առին , որ ինչուան վերջն ալ պահուեցաւ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Բարեխառնութեան պայման :

Հաւատարիմ բարեկամին մէկը անգամ մը Հռուտիլիոս երեւելի հռովմայեցոյն անիրաւ բանի մը վրայ խնդիրք ըրաւ : Հռուտիլիոս մերժեց անոր ազաւանքը . իսկ բարեկամը բարեկանաւորով դարձաւ “ Ի՞նչ բանի կու գայ ինձի բարեկամութիւնդ , ըսաւ , երբոր ամենեկին շնորհք մը չէս ըներ ” : Այն ատեն Հռուտիլիոս պատասխանեց տաքութեամբ . “ Ես ալ ի՞նչ օգուտ քաղեմ քու բարեկամութեանդ , երբոր հարկ կ'ըլլայ ինձի որ առաքինութեան ու արդարութեան դէմ ընելով պահեմ զայն ” :

Չարժեքաւորութեան :

Սպանիոյ թագաւոր մը կառավարութեան ու պատերազմի գլուխ չունենալով՝ շատ քաղաքներ ու տեղեր կորսնցուց . 'ի վերայ այս ամենայնի իր պաշտականները չողորթութեամբ Մեծ պատուանունը կու տային իրեն : Դարձաւ խելացի ոպանիացի մը “ Այս թագաւորին մեծութիւնը , ըսաւ , փոսերու կը նմանի , որ որչափ շատ հող վերցընես՝ այնչափ աւելի կը մեծնան ” :

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐՔՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ